

ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Դավթյանը ծանոթացել է Կապանի բժշկական կենտրոնում իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքին

27.02.2015թ.

ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Դավթյանն այսօր այցելել է «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ այնտեղ կատարվող շինարարական աշխատանքների ընթացքին տեղում հետևելու, առկա խնդիրներին ծանոթանալու նպատակով:

Մարզպետի տեղակալ Վ. Դավթյանը ՀՀ առողջապահության նախարարության «Ծրագրերի իրականացման գրասենյակի» տնօրեն Ն. Զուլյանի, ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության բաժնի պետ Ն. Գևորգյանի, «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Ս. Օրբելյանի և տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ շրջել է բժշկական կենտրոնի վերկառուցվող թերապևտիկ և վարչական մասնաշենքերում, ծանոթացել Համաշխարհային բանկի վարկային ծրագրի շրջանակներում իրականացվող վերանորոգման աշխատանքներին, բնականոն գործունեության համար ստեղծված պայմաններին:

Այստեղ շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել ընթացիկ տարվա ամռանը:

Վ. Դավթյանը գրուցել է շինարարների հետ, ծանոթացել է բժշկական կենտրոնի վերանորոգվող մասնաշենքի կառուցման և արդիականացման աշխատանքների ընթացքին:

Պատասխանատուները տեղեկացրին, որ շինարարական աշխատանքների համար որևէ խոչընդոտ ներկայումս չկա, և աշխատանքներն ընթանում են բնականոն հունով: Շինարարների և նախագծողների հետ նաև քննարկվել են շինաշխատանքներին առնչվող այլ հարցեր: